



ԵՐԿՈՒԵԱՔԹԻ, 23 ԱՊՐԻԼ, 2018

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ԵՐԱՆԵԼԻ Է ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՊՐՈՂ

Երանի անոնց, որոնք ամբասիր կեանք մը կ'ապրին,
որոնք կ'ապրին Տիրոջ Օրէնքին համաձայն:
Երանի անոնց, որոնք Տիրոջ պատուիրանները կը գործադրեն,
ամբողջ սրտով անոր կը հնազանդին.
որոնք չարիք չեն գործեր,
այլ՝ անոր ճամբուն մէջ կը քալեն:
Դուն հրամայեցիր բժախնդրութեամբ գործադրել հրահանգներդ:
Ինչքան կ'ուզեմ անշեղ ընթացքով գործադրել քու կանոններդ:
Այն ատեն ամօթ պիտի չզգամ ամէն անգամ որ
ուշադրութիւնս դարձնեմ քու պատուէրներուդ:
Որքան կը սորվիմ արդար դափաստաններդ,
այնքան կը գոհաբանեմ քեզ անկեղծ սրտով:
Պիտի գործադրեմ քու կանոններդ.
բնաւ, բնաւ մի՛ լքեր վիս:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրք Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հոսկանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ
ԳԼՈՒԽ 2:3-6

ԶԱՍՏՈՒՄԾ ԾԱՆՉՅՈՂԸ ԱՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ ԿՐ ՊԱՀԷ (2:3-6)

«Հիմա գիտեմ, թե այսուհետև պիտի չդեսնեմ զիս: Եկայ ձեզի բոլորիդ, շրջեցայ եւ Աստուծոյ արքայութիւնը քարոզեցի, եւ ահաւասիկ կը յայտարարեմ այսօր՝ թէ խիճս հանդարտ է, որովհետև առանց քաշուելու յայտնեցի ձեզի Աստուծոյ կամքը: Հսկեցէք ձեր անձերուն եւ ձեր ամբողջ հօգին, որուն փեսուջ կարգեց ձեզ Սուրբ Հոգին: Հովուեցէք Տիրոջ եկեղեցին, որ ան իր արիւնով գնեց: Որովհետև գիտեմ, թէ իմ մեկնումէս ետք յափշտակիչ գայլեր պիտի մտնեն ձեր մէջ, որոնք պիտի չխնայեն հօգին: Ձեր մէջէն եւս պիտի ելլեն մարդիկ, որոնք սխալ բաներ պիտի ուսուցանեն, հաւաքացեալները իրենց երեւեն փանելու համար: Հետեւաբար արթուն եղէք, յիշեցէք թէ ինչպէս երեք փարի անդադար, գիշեր ու ցերեկ արցունքով խրատեցի իւրաքանչիւրդ: Եւ հիմա ձեզ կը յանձնեմ Աստուծոյ եւ իր շնորհքի Անեղբարանին, որ կրնայ ձեզ հոգեւորապէս աճեցնել եւ իր բոլոր սուրբերուն ժառանգակից դարձնել» (Գործք 20:25-32): Վստահաբար Յովհաննէս Առաքեալ ինք եւս համամիտ, եւ փակալին չըսելու համար նոյնը պիտի կրկնէր հաւաքացեալներուն եւ այսօր մեզմէ իւրաքանչիւրին: Այս բաները պարզ արքայայտութիւն չեն, այլ Սուրբ Հոգիին մղումով ու շնորհով փրուած պարզամտներ են, որ փրուած են իւրաքանչիւրիս: Որովհետև այսօր կ'ապրինք այս իրավիճակը: Եկեղեցին այսօր ներքին թէ արտաքին հալածանքի ենթարկուած է: Այսօր, ինչպէս անցեալին, չարը կը փորձէ գալու գողնելու, կործանելու, յափշտակելու եւ սպաննելու: Բայց Քրիստոսին կողմէ Առաքեալ փրուած ու մեզի փոխանցուած պարզամտ կու գայ մեզ խրատուսելու, զօրացնելու եւ ըսելու, «**զօրացէք Տիրոջմով եւ իր ամենակարող զօրութեամբ**» (Եփես 6:10): Որովհետև Հօրը քով բարեխօս ունինք միակ Արդարը՝ Յիսուս Քրիստոսը (Ա Յովի 2:1):

Ահա այս մօտեցումով Յովհաննէս Առաքեալ կը շարունակէ իր նամակը ցոյց փայլով, թէ մեր մէջ կարարեալ կ'ըլլայ Աստուծոյ հանդէպ սերը եթէ երբեք Անոր պատուիրանները պահենք ու գործադրենք:

«**Եթէ պահէք ու գործադրէք իր պատուիրանները, այն արեւն միայն կը գիտնանք՝ թէ զինք կը ճանչնանք թէ ոչ**» (3 հմր): Պահել ու գործադրել: Սրտի մէջ պահել ու գործադրել, ի՞նչը: Աստուծոյ պատուիրանները: Ո՞ր պատուիրանները: Առիթով մը Օրէնքի ուսուցիչը հարցուց Յիսուսի, ի՞նչ ընեմ յաւիտենական կեանքը ժառանգելու համար: Յիսուս պատասխանեց. Օրէնքի գիրքին մմէջ ի՞նչ գրուած է: «**Սիրէ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ, ամբողջ զօրութեամբդ եւ ամբողջ մարմովդ, եւ սիրէ քու ընկերդ քու անձիդ պէս**» (Ղուկ 10:25-27): Ուրեմն Աստուծոյ պատուիրանները պահել ու գործադրել կը նշանակէ զԱստուած սիրել եւ իր նմանը: Ուրեմն զԱստուած սիրելով է որ զԻնք կը ճանչնանք, այլապէս չենք կրնար ճանչնալ: Առաւել եւս զԱստուած սիրելով նաեւ մեղքէ հեռու կ'ըլլանք: Ուրեմն, եթէ մեղքի մէջ ենք, կը նշանակէ զԱստուած չենք սիրեր, ուրեմն չենք ալ ճանչնար: Որովհետև մեր զԱստուած ճանչնալ յայտարարելը արդէն անվաւեր է: Ի՞նչպէս կրնանք զԱստուած ճանչնալ, եւ ի՞նչպէս վստահեցնել որ մենք զԱստուած կը ճանչնանք: Առաւել եւս, եթէ ըսենք կը ճանչնանք, եւ միւս կողմէ Անոր պատուիրանները չենք գործադրեր, այսինքն՝ սիրոյ պատուիրանը, սուր կը խօսինք եւ մեր մէջ ճշմարտութիւնը չկայ: Ինչպէս վերը պիտի ըսեր դարձեալ. «**Եթէ ըսենք «Մեղք չունինք», մենք մեզ կը խաբենք եւ մեր մէջ ճշմարտութիւնը չկայ**» (8 հմր): Ինչպէս նախապէս ալ ըսուեցաւ, որ Յովհաննէս Առաքեալ այս նամակը կը գրէր այնպիսի ժամանակահատուածի մը մէջ, ուր կնոսարիկեան աղանդը, իր մոլորեցուցիչ ուսմունքով կու գար յայտարարելու թէ ինք ունի յայտնի ուսմունք մը որով կը ճանչնայ զԱստուած, իր բանականութեամբ եւ փրամաբանութեամբ: Իսկ ուրիշներու համար ալ զԱստուած ճանչնալը միտքիք, վերացական ճանաչում մըն է: Այս երկու մօտեցումները, սակայն, իրենց ապրելակերպով, կենցաղով, բոլորովին հեռու էին Աստուծոյ կամքէն ու պատուիրանէն: Բայց ի՞նչ կը նշանակէ զԱստուած ճանչնալ, ինչ որ Յովհաննէս Առաքեալ կ'ուզէ ցոյց փայլ այս նամակի ճամբով: Յակոբոս Առաքեալ մէկ այլ ուրիշ ձեւով պիտի ըսէ. «**Դեւերն ալ կը ճանչնան զԱստուած, եւ կը սարսափին**» (Յակոբոս 2:19), բայց յաւիտենական կեանքը չենք կրնար ժառանգել: Ահա որպէս նշան կրնանք գիտնալ թէ Քրիստոսի միացած ենք, եւ եթէ Քրիստոսի միացած ենք պէտք է ապրինք ինչպէս Քրիստոս ինք ապրեցաւ: Այսինքն՝ Քրիստոսանման կեանք մը ապրելու: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «**Ով որ Քրիստոսի միացած է նոր արարած մըն է**»: